

«1514ի Չալտրանի ճակատամարտի մէջ երբ Պարսիկները պարտուեցան Օսմանցիներէն, հարկեցուցիչ դարձաւ որ Քիւրդական ցեղերը ըլլան նստակեաց: Այս ծրագիրը Սուլթան Սէլիմ Ա-ի նախարար Իարխանն է, որ Պիթիսցի Քիւրդ մը էր. ծրագրի մէկ մասն ալ էր, — փոխադրել այս անհանդարտ ցեղի մէկ հատուածը և հաստատել Տաճկաստանի նոր սահմանին այն գաւառներու մէջ՝ որոնք սահմանակից էին Վրաստանի ու Պարսկաստանի՝ զրաւուած Շահէն: Կըսուի թէ անոնց հնորհուեցաւ տեական աղահարկութիւն մը այն պայմանաւ՝ որ իրեն միլիցիա ծառայեն սահմանին վրայ՝ որը արուեցաւ իրենց ի պահպանութիւն:

Այժմ կան բնդարձակ գաւառներ երկրի հարաւային մասի մէջ՝ ուր Քիւրդական ցեղեր կը բնակին, որոնք անկախութեան մօտեցող վիճակ մը ունին, և երբէք անոնց թիւը չէ վիճակազրուած:»

Արիշանը Էլմիսանի հին ձեռագրերէն ցուցակ մը կը հրատարակէ Հայ նախարարութիւններու, որոնք Քիւրդերու պէս ցեղական բաժանումներու ևն վերածուած և անոնց ամէն մէկը ունի իր գինւորական զօրութիւնը:

Յուշակը որ մենք պիտի ներկայացնենք՝ պարզ պիտի տեսնուի որ այս նախարարութիւնները կը բաժնուին երկու ճիւղի՝ արեւակցական և բնակակցական: Արեւակցականները կը վերջանան, ան, եան, ի վերջաւորութիւններով, բնակակցականները զի վերջաւորութեամբ:

Անյոդակի տեսանք որ նախարարութիւնները Հայաստանի մէջ կազմուեցան իշխանութեան ու զօրութեան հիմքի վրայ, երբ արեւակցութիւնը մեծ դեր չէր խաղար երկրի մէջ քան բնակակցութիւն և ուժը: Կրօնը նախարարութեանց ու իշխանութեանց համար ուժ ու զօրութիւն կազմելու քաղաքականութիւն մ'էր բաց ի ժողովուրդէն. Հայ պատմութիւնը լեցուն է այս փաստերով: Հետեապէս չենք կրնար ժխտել որ այս Հայ նախարարութիւններու մէջ զոյութիւն ունին Քիւր-